ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ՊԵՏԱԿԱՆ ԵԿԱՄՈՒՏՆԵՐԻ ԿՈՄԻՏԵ

ք. Երևան **<<28>> սեպտեմբեր 2018թ**

ՈՐՈՇՈՒՄ ԹԻՎ 037922/1

ՀԱՐԿ ՎՃԱՐՈՂԻ ԴՐԱՄԱՐԿՂՈՒՄ ԱՌԿԱ ԿԱՆԽԻԿ ԴՐԱՄԱԿԱՆ ՄԻՋՈՑՆԵՐԻ ՎՐԱ ԱՐԳԵԼԱՆՔ ԴՆԵԼՈՒ ՄԱՍԻՆ

ՀՀ ՊԵԿ ԻՎ ՀԳ բաժնի գլխավոր մասնագետներ Աննա Հայրապետյանս և Թ. Ասրյանս

/ՀՀ ՊԵԿ ստորաբաժանման անվանումը, պաշտոնը, անուն, ազգանունը/

Համաձայն ՀՀ պետական եկամուտների կոմիտեի նախագահի 14.09.2018թ. թիվ ԱՀ 037922 հանձնարարագրի և ուսումնասիրելով թիվ 2344/05-Ա վարչական վարույթի և հարկ վճարողի վերաբերյալ նյութերը

Պարզեցինք

<<ՇԵՐՏ>> ՍՊԸ-ի (ՀՎՀՀ՝ 00896221, հասցե՝ ք. Երևան, ՅԱՆ. ՌԱՅՆԻՍԻ Փ. 5/27, պետական գրանցման համար՝ 264.110.877069) հարկային մարմնի կողմից վերահսկվող եկամուտների գծով չկատարված պարտավորությունը 26.07.2018 թվականի դրությամբ կազմել է 7.612.026 դրամ:

16.08.2018թ.-ին ՀՀ ՊԵԿ իրավաբանական վարչության պետի կողմից որոշում է կայացվել <<ՇԵՐՏ>> ՍՊԸ-ից 5.612.058 դրամ գանձելու վերաբերյալ, որից հետո հարկ վճարողի կողմից կատարվել են վճարումներ:

18.09.2018թ.-ի թիվ 037922 որոշմամբ արգելանք է կիրառվել <<ՇԵՐՏ>> ՍՊԸ-ի բանկային հաշիվներում առկա դրամական միջոցների վրա 2.616.592 դրամի չափով, որից հետո հարկ վճարողի կողմից կատարվել են վճարումներ:

ՀՀ Հարկային օրենսգրքի 431-րդ հոդվածի 2-րդ մասի 1-ին կետի համաձայն <<ՇԵՐՏ>> ՍՊԸ-ի բանկային հաշիվներում առկա դրամական միջոցների բացակայության հետևանքով անհրաժեշտ է ղեկավարվել ՀՀ Հարկային օրենսգրքի 431-րդ հոդվածի 2-րդ մասի 2-րդ կետով և արգելանք կիրառել դրամարկղում առկա կանխիկ դրամական միջոցներ վրա:

Վերոգրյալի հիման վրա, ղեկավարվելով ՀՀ Հարկային օրենսգրքի 429-րդ 430-րդ և 431-րդ հոդվածներով՝

ՈՐՈՇԵՑԻՆՔ

Արգելանք դնել հարկ վճարող <<ՇԵՐՏ>> ՍՊԸ-ի (ՀՎՀՀ՝ 00896221) դրամարկղում առկա կանխիկ դրամական միջոցների վրա՝ 328.166 դրամի չափով:

Նրան արգելել արգելադրված գույքը օգտագործել և /կամ/ տնօրինել և /կամ/ տիրապետել:

Որոշման պատճենը ոչ ուշ քան այն ընդունելու հաջորդ օրը, պատշաճ ձևով ուղարկել <<ՇԵՐՏ>> ՍՊԸ-ին:

Արգելանք դնելու մասին որոշումը պարտադիր է բոլոր պետական մարմինների, տեղական ինքնակառավարման մարմինների պաշտոնատար անձանց, կազմակերպությունների ու ֆիզիկական անձանց համար և ենթակա է կատարման Հայաստանի Հանրապետության ամբողջ տարածքում:

Սույն որոշումը կարող է բողոքարկվել հարկային մարմին /երկամսյա ժամկետում/ կամ ՀՀ վարչական դատարան: Որոշման արտադատական կարգով բողոքարկումը, համաձայն ՀՀ Հարկային օրենսգրքի 432-րդ հոդվածի 5-րդ մասի, չի կասեցնում որոշման կատարումը:

Ա. Հայրապետյան			
/Արգելանք դնող պաշտոնատար անձի անունը, ազգանունը/	/ստորագրությունը/	/Հարկ վճարող պաշտոնատար / անձի անունը, ազգանունը/	ստորագրությունը
Թ. Ասրյան			
/Արգելանք դնող պաշտոնատար անձի անունը, ազգանունը/	/ստորագրությունը/	/Հարկ վճարող պաշտոնատար / անձի անունը, ազգանունը/	ստորագրությունը

Սույն որոշումը ստանալու պահից Դուք նախազգուշացված եք արգելադրված գույքը կամ դրա առանձին բաղադրամասերը վատնելու, օտարելու, թաքցնելու կամ ապօրինաբար մեկ ուրիշին հանձնելու դեպքում վարչական կամ քրեական պատասխանատվության ենթարկվելու մասին: